



## Երևանի 2017թ.-ի առաջնությունների կանոնակարգ

### Տղամարդկանց Երևանի 87-րդ առաջնություն

<i>Կազմակերպիչ</i>	Երևանի շախմատի ֆեդերացիա
<i>Նպատակները</i>	Երևանի ուժեղագույն շախմատիստների և Հայաստանի առաջնության առաջին խմբի մրցաշարի մասնակիցների որոշումը:
<i>¼ եզրափակիչ</i>	
<i>Ժամկետներ</i>	25.01- 03.02.2017թ.
<i>Մասնակիցներ</i>	Մրցաշարին մասնակցելու իրավունք ունեն 2001- 2050 վարկանիշ ունեցող շախմատիստները, ինչպես նաև 2001-ից ցածր վարկանիշ ունեցող, 1998թ.-ի դեկտեմբերի 31-ից հետո ծնված I կարգային և I կարգի բալլ ունեցող շախմատիստները:
<i>Անցկացման կարգը</i>	Շվեյցարական մրցակարգ՝ 9 խաղափուլ:
<i>½ եզրափակիչ</i>	
<i>Ժամկետներ</i>	11-19 մայիսի 2017թ.
<i>Մասնակիցներ</i>	Մրցաշարին մասնակցելու իրավունք ունեն՝

- 2051 -ից մինչև 2300 ազգային վարկանիշ ունեցող շախմատիստները,
- Երևանի 2017թ.մինչև 16 տարեկանների առաջնությունում 1-3 տեղեր գրաված շախմատիստները,
- Երևանի 2017թ.մինչև 14 տարեկանների առաջնությունում 1-3 տեղեր գրաված շախմատիստները,
- Երևանի 2017թ.մինչև 12 տարեկանների առաջնության հաղթողը,
- Կանանց ազգային վարպետները,
- Կանանց ՖԻԴԵ-ի վարպետները,
- 25 շախմատիստ 1/4 եզրափակիչ մրցաշարից

*Անցկացման կարգը*

Շվեյցարական մրցակարգ՝ 9 խաղափուլ:

**Եզրափակիչ**

*Ժամկետներ*

01.06.-10.06.2017թ.

*Մասնակիցներ*

Մրցաշարին մասնակցելու իրավունք ունեն՝

- միջազգային գրոսմայստերները,
- միջազգային վարպետները,
- ազգային վարպետները,
- ՖԻԴԵ-ի վարպետները,
- կանանց միջազգային գրոսմայստերները,
- կանանց միջազգային վարպետները,
- Հայաստանի նախորդ առաջնության 1-ին խմբի մրցաշարի մասնակիցները,
- 2300-ից բարձր ազգային կամ միջազգային վարկանիշ ունեցող շախմատիստները,
- 15 շախմատիստ կիսաեզրափակիչ մրցաշարից,
- 2017թ. Հայաստանի մինչև 18 տարեկանների առաջնությունում 2-5 տեղեր գրաված շախմատիստները,

- 2017թ. Հայաստանի մինչև 16 տարեկանների առաջնությունում 1-5 տեղեր գրաված շախմատիստները,
- 2017թ. Հայաստանի մինչև 14 տարեկանների առաջնությունում 1-3 տեղեր գրաված շախմատիստները,
- 2017թ. Հայաստանի մինչև 16 տարեկանների աղջիկների առաջնության հաղթողը

*Անցկացման կարգը*      Շվեյցարական մրցակարգ՝ 9 խաղափուլ:

### **Կանանց Երևանի 73-րդ առաջնություն**

*Կազմակերպիչներ*      Երևանի շախմատի ֆեդերացիա  
 Հայաստանի Շախմատային ֆեդերացիա

*Նպատակները*      Երևանի ուժեղագույն շախմատիստուհիների և Հայաստանի առաջնության մասնակիցների որոշումը:

#### **1/2 Եզրափակիչ**

*Ժամկետներ*      Համաձայն Հայաստանի շախմատային ֆեդերացիայի որոշման

*Մասնակիցներ*      Մինչև 2001 ազգային վարկանիշ ունեցող, ինչպես նաև I և II կարգային շախմատիստուհիները,

*Անցկացման կարգը*      Շվեյցարական մրցակարգ՝ 9 խաղափուլ:

#### **Եզրափակիչ**

Մրցաշարը      միաժամանակ      հանդիսանում      է      Հայաստանի      կանանց  
 առաջնության առաջին խմբի մրցաշար:

*Ժամկետներ*      Համաձայն Հայաստանի շախմատային ֆեդերացիայի որոշման

*Մասնակիցներ*

- 2001-ից ավելի ազգային վարկանիշ ունեցող շախմատիստուհիները,
- Հայաստանի 2017թ. աղջիկների մինչև 18, 16 և 14 տարեկանների առաջնության մասնակիցները և մինչև 12 տարեկանների չեմպիոնը,
- 10 շախմատիստուհի ½ եզրափակիչ մրցաշարից

*Անցկացման կարգը*      Շվեյցարական մրցակարգ՝ 9 խաղափուլ:

**Պատանիների 2017թ. առաջնություն**

*Կազմակերպիչներ*      Երևանի քաղաքապետարան

Երևանի շախմատի ֆեդերացիա

*Նպատակները*

Երևանի ուժեղագույն պատանի շախմատիստների և Հայաստանի պատանիների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարի մասնակիցների որոշումը:

**1/2 եզրափակիչ (մինչև 10տարեկաններ)**

*Ժամկետներ*      25.01- 03.02.2017թ.

*Մասնակիցներ*      Մասնակցելու իրավունք ունեն 2006թ. դեկտեմբերի 31-ից հետո ծնված II և III կարգային և 2008թ. դեկտեմբերի 31-ից հետո ծնված IV կարգային պատանի շախմատիստները:

*Անցկացման կարգը*      Շվեյցարական մրցակարգ՝ 9 խաղափուլ:

**Եզրափակիչ**

*Ժամկետներ*      13-22 փետրվարի 2017թ.

*Մասնակիցներ*      Մրցաշարն անց է կացվում 4 տարիքային խմբերով՝

- մինչև 16 տարեկան
- մինչև 14 տարեկան

- մինչև 12 տարեկան
- մինչև 10 տարեկան

Մասնակցում են միայն 1 կարգային շախմատիստները:

Մինչև 10 տարեկանների խմբում նաև կիսաեզրափակչում 1-40 տեղերը գրաված և 40-րդ տեղից հետո 2008թ.-ի դեկտեմբերի 31-ից հետո ծնված 5 լավագույն արդյունք ցույց տված շախմատիստներ:

Արգելվում է այն շախմատիստների մասնակցությունը, ովքեր ունեն որևէ տարիքային խմբում Հայաստանի առաջնության կիսաեզրափակիչ կամ եզրափակիչ մրցաշարերին մասնակցության անհատական իրավունք:

*Անցկացման կարգը*

Շվեյցարական մրցակարգ՝ 9 խաղափուլ:

Ծանոթություն.

1.Բոլոր մրցաշարերին (բացառությամբ կանանց առաջնության եզրափակիչից) կարող են մասնակցել միայն այն շախմատիստները, որոնք Հայաստանի Շախմատային ֆեդերացիայի վարկանիշային հանձնաժողովի կողմից կազմված վարկանիշային ցուցակում ներկայացնում են Երևանը:

2.Բոլոր մրցաշարերն անց են կացվում Տ.Պետրոսյանի անվան Շախմատի տանը:

3.Երևանի առաջնությունների բոլոր մրցաշարերում խաղից ուշանալու թույլատրելի ժամանակը խաղափուլի սկզբից 30 րոպե է: